**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4**
**ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/14 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ**
**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

**ք. Երևան** **26.04.2022թ.**

2022թ.-ի ապրիլի 26-ին՝ ժամը 14:30-ին, ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9 հասցեում գտնվող «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ ավտոմեքենաների պահեստամասերի ձեռքբերման ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/14 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Խաչիկ Մալոյան | «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի Շահագործման բաժնի պետ, |
| Նաիրա Բաղդասարյան | «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի Հաշվապահ, |
| Զվարթ Ղազարյան | «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի Տնտեսագետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Խաչիկ Մալոյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Մարիա Ղազարյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/32 բողոքի քննության որոշումը կատարելու մասին:
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 2. ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ ԹԻՎ ԳԲՔԱ-ԼՕ-2022/32 ԲՈՂՈՔԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/32 որոշումը՝ Հանձնաժողովը որոշեց.

1. Դադարեցնել 10.03.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ «Սենտրալ» ՍՊԸ-ի հայտը մերժելու և գնման ընթացակարգը 1-ից 5-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին կայացված որոշումները:

2. Հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները 26.04.2022թ. նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով և նույն օրը «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից eauction.armeps.am համակարգ մուտքագրած central.llc@yandex.com էլ. հասցեին «Սենտրալ» ՍՊԸ-ին ներկայացնել շտկման ծանուցում հետևյալ անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ.

- Հավելված 1.2-ով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարգրում միաժամանակ լրացված են և 4.5. և 4.6. բաժինները, մինչդեռ պետք է լրացվի կամ 4.5. կամ 4.6. բաժինը: Հավելված 1.2-ով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարգրի 4.5. (և 4.6.) բաժնում մանսակցության չափը նշված է 100%, մասնակցությունը նշված է ուղղակի, մինչդեռ «ա» կետի փոխարեն նշված է «բ» կետը, որը լրացվում է, եթե անձն «ա» կետի իմաստով չի հանդիսանում կազմակերպության իրական շահառու, սակայն վերահսկում է Կազմակերպությունը՝ իրավական գործիքների (այդ թվում՝ կնքված գործարքների) ուժով, այլ բնույթի անձնական ազդեցության հիման վրա կամ այլ միջոցներով: Այս մասով ևս հարկավոր է կատարել հստակեցումներ: Հավելված 1.2-ով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարգրի 4.7.1. բաժնով պահանջվող տեղեկատվությունը ներկայացված չէ:
- «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից 1-5-րդ չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերում բացակայում է գնման առարկայի ապրանքային նշանի, մակնիշի, արտադրողի և ֆիրմային անվանման վերաբերյալ տեղեկատվությունը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐԸ, ԺԱՄԸ ԵՎ ՎԱՅՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը:
2. Ընթացակարգի Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը սահմանել 28.04.2022թ. ժամը 17:30-ին, ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9 հասցեում գտնվող «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի շենքում:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Խաչիկ Մալոյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Նաիրա Բաղդասարյան ____________

Զվարթ Ղազարյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Մարիա Ղազարյան ____________